ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

15 APR 2019 «12» ապրիլ 2019թ. No 893 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԹՈՒՖԵՆԿՋԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ, ՔՈՉԻՆՅԱՆ 13/16, ԵՐԵՎԱՆ- ԲԱՑ ԹՈՂՆՄԱՆ ՀՍԿՈՂ, ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՂ, ՍԻՆՈԿԵՄ ՖԱՐՄԱՍՅՈՒՏԻԿԱԼՍ ՍՊԸ, ՊԼՈՏ 35-36; ՍԵԿՏՈՐ-6(Ա), IIԵ, ՌԱՆԻՊՈՒՐ, ՀԱՐԻԴՎԱՐ, ՈՒՏԱՐԱԿՀԱՆԴ, ՀՆԴԿԱՍՏԱՆ- ԲԱԼՔ ԱՐՏԱԴՐՈՂ, ԱՌԱՋՆԱՅԻՆ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՂ» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ «ՈՒՐԻԶՈԼ 200ՄԳ, ՖԼԱՎՈՔՍԱՏ, ԴԵՂԱՀԱՏԵՐ ԹԱՂԱՆԹԱՊԱՏ, 200ՄԳ; (10/1X10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ» ԴԵՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված N1-ի 5-րդ կետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 29.03.2019 թվականի N 18475 բացասական եզրակացությունը, «Ուրիզոլ 200մգ, ֆլավոքսատ, դեղահատեր թաղանթապատ, 200մգ; (10/1x10/) բլիստերում» դեղի որակի փորձաքննության արդյունքները չի համապատասխանում կենսահամարժեքության փորձաքննության պահանջներին: Հնարավոր չէ գնահատել որակը և արդյունավետությունը և ղեկավարվելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Մերժել Հայաստանի Հանրապետության «Թուֆենկջի Գրուպ ՍՊԸ, Քոչինյան 13/16, Երևան-բաց թողնման հսկող, երկրորդային փաթեթավորող, Սինոկեմ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, Պլոտ 35-36; Սեկտոր-6(Ա), IIԵ, Ռանիպուր, Հարիդվար, Ուտարակհանդ, Հնդկաստան- բալք արտադրող, առաջնային փաթեթավորող» դեղագործական ընկերության արտադրության «Ուրիզոլ 200մգ, ֆլավոքսատ, դեղահատեր թաղանթապատ, 200մգ; (10/1x10/) բլիստերում» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Ջ. Դարբինյանին սույն հրամանը 3-օրյա ժամկետում պատշաճ ձևով պատվիրված փոստով՝ առաքել հայտատուին:

15.04.19

3. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ Լ.Մելիքյանին՝ 3-օրյա ժամկետում ապահովել սույն հրամանի տրամադրումը հայտատուին:

4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի հայտատուին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

4/12/2019

X

VERIFIED OCSP 4/12/2019 12:08:00 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ